

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ  
ՅԵՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ  
1936—37 ՈՒՍ. ՏԱՐԻՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ  
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

---

(Հաստատված Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիտարեների  
Խորհրդի կողմից 1937 թ. ապրիլի 20—21-ին)

372  
5-26

3725-26Վ.:

ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈԶ ԼՐԻՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ  
ՅԵՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1936—37  
ՈՒՍ. ՏԱՐԻՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(Հաստատված Հայկական ԽՍՀ ԺՈՂՈՎՐԴական կոմիտեների  
Խորհրդի կողմից 1937 թ. ապրիլի 20—21-ին)

1010  
1121182

13 AUG 2013

50.545

## ՎՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

(Արձ. № 8, կետ 16)

20—21 ապրիլի 1937 թ.

ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈԶ ԼՐԻՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻԶՆԱ-  
ԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1936/37 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ  
ԱՎԱՐՏԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ:

1. Հայկանություն տալ Լուսժողկոմատի ներկա-  
յացրած տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնա-  
կարգ դպրոցների 1936/37 ուսումնական տարին ավար-  
տելու կարգին (կցվում է):

2. Ուսուցումը բոլոր դասարաններում ավարտել  
մայիսի 20-ին:

3. Լուսժողկոմատին և Պետհրատին՝ ապահովել  
փոխադրման վկայագրերի և տարրական, վոչ լրիվ  
միջնակարգ ու միջնակարգ դպրոց ավարտողների վկա-  
յագրերի ու առեստատների առաջընթյունը և տեղե-  
րին ուղարկելը վոչ ուշ, քան մայիսի 10-ը:

4. Առաջարկել Քաղխորհուրդներին և ըրչգործ-  
կոմներին մինչև մայիսի 5-ը լսել և քննել ըրջանային  
կրթության բաժնի վարիչի զեկուցումը ուսուցման ըն-  
թացքի մասին՝ ըրջանի, քաղաքի դպրոցներում և հաս-

տատել կոնկրետ միջոցառումներ՝ 1936/37 ուսումնա-  
կան տարին հաջողությամբ ավարտելու համար:

5. Առաջարկել քաղխորհուրդների և շրջգործկոմ-  
ների նախագահներին, դպրոցական տարին փակելուց  
հետո հրավիրել քաղաքի և շրջանի ուսուցիչների խոր-  
հրդակցություն, վորոտել լսել ժողովրդական կրթու-  
թյան բաժինների վարիչների և դպրոցի դիրեկտորնե-  
րի (վարիչների) հաշվետվությունները անցյալ ուսում-  
նական տարվա ընթացքում կատարած աշխատանքի և  
յեկող ուսումնական տարվա նախապատրաստման մա-  
ստ:

Հայկական ԽՍՀ Ժողկոմինորի նախագահ՝  
Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

Հայկական ԽՍՀ Ժողկոմինորի գործերի  
կտակալարչի տեղակալ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԱՐՄԱԿԱՆ, ՎՈԶ ԼՐԻՎ ՄԻԶՆԱԿԱՐԴ ՅԵՎ ՄԻԶՆԱ-  
ԿԱՐԴ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(Հաստատված ՀԽՍՀ Ժողկոմինորի 1937 թ.  
ապրիլի 20-ի նիստում)

1. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑ-  
ԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ.

1. Տարեկերջին քննություններն անցկացվում են  
4—10-րդ դաստիարակություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Դպրոցի նախապատրաստա-  
կան, առաջին, յերկրորդ և յերրորդ դաստիարակ-  
ներում քննություններ չեն անցկացվում։ Այդ  
դաստիարանի աշակերտները փոխադրվում կամ  
մնում են նույն դաստիարակության հրենց  
առաջարկմության տարեկան գնահատականների։  
Առաջին և յերկրորդ դաստիարակների աշակերտ-  
ներին աշնանային քննություններ չի տրվում։  
Յեթե առաջին և յերկրորդ դաստիարանի աշա-  
կերտն ունի մայրենի լեզվից և ամ թվաբանու-  
թյունից «վատ» գնահատական մնում ե նույն  
դաստիարակության:

Յերրորդ դաստիարանի աշակերտներին աշնանա-  
յին քննություն կարելի յե տալ միայն մեկ հիմ-  
նական առարկայից։

2. Աշակերտները յենթարկվում են տարեկերջին քննություններին, անկախ նրանից, թե քանի առարկա-յից «վատ» գնահատական ունեն:

3. Դպրոցների դիրեկտորներին և վարչներին իրավունք ե վերապահվում հետաձգել աշնանն աշակերտների քննությունները, վորոնք տարվա ընթացքում հարցելի պատճառով շատ դասեր են բաց թողել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 3 տարի միենույն դասարան-նում մնալ չեն թույլատրվում: Այն աշակերտների նկատմամբ, վրոնք յերկրորդ տարեցիներ են և տարվա ընթացքում անցածը չեն յուրացնելու վորագրման յենթակա չեն, ժող. Կրթ. բաժինը և զպրոցը պարտավոր են այդպիսիների հանդեպ ունենալ հատուկ մոտեցում, ցույց տալով նրանց կազմակերպված ողնություն և հնարավորություն փոխադրվելու հետեւալ դասա-բանը:

4. Առանձին դեպքերում հիմանդրու յերեխանները, վորոնք տարիվա ընթացքում համապատասխան առարկաներից «միջակ» գնահատականից վոչ ցածր առաջադիմություն են ունեցել, զպրոցի դիրեկտորի (վարիչի) հայեցողությամբ կարող են հաջորդ դասարանը փոխադրվել առանց քննության:

Քննության յենթակա բոլոր առարկաներից «վատ» գնահատական ունեցողներին, վորագր բացառություն, թողնել նույն դասարանում առանց քննության յենթարկելու:

5. ա) Ցեղե 4-րդ դասարանի աշակերտը տարեկերջին քննություններից հետո մեկ կամ յերկու քննության յենթակա առարկայից «չատ վատ» կամ «վատ» գնահատական և ստանում, թույլատրվում են նրան աշնանը քննություն տալու: Ցեղեք և ամելի քննության յենթակա առարկաներից «վատ» կամ «չատ վատ» գնահատական ունեցող աշակերտները թողնվում են նույն դասարանում:

բ) 5—10 դասարաններում թույլատրվում ե աշնա-նը քննություններ տալ յերկու՝ քննության յենթակա և մեկ՝ քննության վոչ յենթակա առարկաներից: Քննության յենթակա յերեք առարկայից «վատ» ունե-ցող աշակերտը մնում է նույն դասարանում:

6. Աշնանային քննությունների ժամանակ, յերբ աշակերտն ստանում ե «վատ» գնահատական նույնիսկ մեկ առարկայից մնում է նույն դասարանում:

7. Ռւառմնական պարագաներները վերջանում են մայիսի 20-ին բոլոր դասարաններում:

8. Տարեկերջի քննություններն սկսվում են մայի-սի 21-ից:

9. Քննությունները կատարվում են հետեւալ ա-ռարկաներից հետեւալ ժամկետներում.

4-րդ դասարանում.

մայիսի լեզվից (գրավոր և բանավոր)  
սուսաց լեզվից » »  
թվաբանությունից » »  
Հնդամենը 6 քննություն, վորից 3-ը գրավոր:  
Մայիսի 21-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ (16 որ):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տարրական դպրոցի 4-րդ դասարանում քննությունները համարվում են ա-վարտական քննություններ:

5-րդ դասարանում.

մայիսի լեզվից (գրավոր և բանավոր)  
սուսաց լեզվից » »  
թվաբանությունից » »  
աշխարհագրությունից (բանավոր)  
Բուռսական դպրոցներում նաև հայոց լեզվից բա-ռավոր և գրավոր:  
Հնդամենը 7 քննություն, վորից 3-ը գրավոր:

Թուսական դպր . 9 քննություն , վորից 4-ը գրավոր :  
Մայիսի 21-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ (16 որ) :

6-րդ դասարանում .

մայրենի լեզվից (գրավոր և բանավոր)  
ոռուսաց լեզվից » »  
թվաբանությունից » »  
աշխարհագրությունից (բանավոր)  
բուսաբանությունից (բանավոր)

Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից  
(գրավոր և բանավոր) :

Բնդամենը 8 քննություն , վորից 3-ը գրավոր : Վոչ  
հայկական դպրոցներում՝ 10 քննություն , վորից 4-ը  
գրավոր :

Մայիսի 21-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ (16  
որ) :

7-րդ դասարանում .

մայրենի լեզվից (բանավոր)  
գրականությունից (գրավոր և բանավոր)  
ոռուսաց լեզվից » »  
հանրահաշվից (գրավոր)  
յերկրաչափությունից (բանավոր)  
ֆիզիկայից »  
պատմությունից »  
աշխարհագրությունից »  
կենդանաբանությունից »

Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից  
(գրավոր և բանավոր) :

Բնդամենը 11 քննություն , վորից 3-ը գրավոր :  
Վոչ հայկական դպրոցներում՝ 13 քննություն , վորից  
4-ը գրավոր : Մայիսի 21-ից մինչեւ հունիսի 15-ը  
(26 որ) :

ՆԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ . — Վոչ լրիվ միջնակարգ դըպ-  
րոցի 7-րդ դասարանի քննությունները համար-  
վում են ավարտական քննություններ :

8-րդ դասարանում .

մայրենի լեզվից (գրավոր)  
գրականությունից (գրավոր և բանավոր)  
ոռուսաց լեզվից » »  
ոռուս . գրականությունից (բանավոր)  
հանրահաշվից (գրավոր և բանավոր)  
յերկրաչափությունից (բանավոր)  
մարդու անատօմ . ու Փիղիուոդ . (բանավոր)  
աշխարհագրությունից »

Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից  
(գրավոր և բանավոր) , հայ գրականությունից (բա-  
նավոր) : Ընդամենը 11 քննություն , վորից 4-ը գրա-  
վոր , վոչ հայկական դպրոցներում՝ 14 քննություն ,  
վորից 5-ը գրավոր : Մայիսի 21-ից մինչեւ հունիսի  
15-ը (26 որ) :

9-րդ դասարանում .

մայրենի լեզվից (գրավոր)  
գրականությունից (գրավոր և բանավոր)  
ոռուսաց լեզվից » »  
ոռուս . գրականությունից (բանավոր)  
հանրահաշվից (գրավոր)  
յեռանկյունաչափությունից (բանավոր)  
յերկրաչափությունից (գրավոր և բանավոր)  
եվլուց . ուսմունքից (բանավոր)  
աշխարհագրությունից »  
Փիղիւայլից »

Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից  
(գրավոր և բանավոր) , հայոց գրականությունից (բա-  
նավոր) — Ընդամենը 13 քննություն , վորից 5-ը գրա-

վոր։ Վոչ հայկական դպրոցներում՝ 16 քննություն,  
Քուից 6-ը գրավոր։

Մէսած մայիսի 21-ից մինչև հունիսի 15-ը (26 որ)։

10-րդ դասարանում։

մայրենի լեզվից (գրավոր և բանավոր)  
գրականությունից » »  
ուսուաց լեզվից » »  
ուսուաց գրականությունից » »  
հանրահաշվից » »  
յերկրաչափությունից » »  
յեռանկյունաչափությունից (բանավոր)  
Փիլիկայից » »  
Քիմիայից » »  
պատմությունից » »  
ստար լեզվից » »

Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից (բանավոր և գրավոր) հայ գրականությունից (գրամուր և բանավոր)։

Ընդումենը 17 քննություն, վորից 6-ը գրավոր։  
Վոչ հայկական դպրոցներում՝ 21 քննություն, վորից 8-ը գրավոր։ Մայիսի 21-ից մինչև հունիսի 20-ը (1 ամիս)։

10. Քննությունների ժամանակ դիտելիքների սոու-  
դումը կատարվում է ուսումնական տարրվա ընթաց-  
քում անցած նյութի սահմաններում։

11. Տվյալ դպրոցի վորեւ դասարանի ծրագրի թե-  
րակատարման մասին դպրոցի դիրեկտորը պարտավոր  
է մինչ քննություններն սկսելը հայտնել ժողկրթու-  
թյան բաժնին, իսկ վերջնա լուսադողկամատին։

12. Քննություններն անց են կացվում ուսմասավա-  
րի կազմած և դիրեկտորի կողմից հաստատված հա-  
տուկ դասացուցակով, վորը փակցվում է դպրոցում  
քննություններն սկսելուց 5 որ առաջ։

13. Սահմանել քննությունների հետևյալ կարգը՝  
ա) Քննության յնթակա այն առարակները, վո-  
րոնք աշակերտից զգալի լարվածություն են պահան-  
ջում, որտեղ և մեջնդժեջ հաջորդեն ավելի հեշտ ա-  
ռարկաներ։

բ) Մեկ որում պետք է անցկացնել միայն մեկ  
քննություն (բանավոր կամ քրավոր)։

գ) Հանդստի որերին քննություններն անցկացնելն  
արգելվում է։

դ) Յուրաքանչյուր դրամում քննության համար  
հատկացվում է 4-րդ դասարանում մեկ ժամ, 5-7  
դասարաններում յերկու ժամից վոչ ավելի, 8-10 դա-  
սարաններում յերեք ժամից վոչ ավելի։

յ) 4-7 դասարաններում բանավոր քննություն-  
ներին հատկացվում է 4 ուսումնական ժամից վոչ ա-  
վելի, 8-10 դասարաններում որական 5 ժամից վոչ  
ավելի։

զ) Յուրաքանչյուր առարկայի քննությունը (բա-  
նավոր կամ գրավոր) պետք է վերջանա մեկ որում։  
Հարկ յեղած գեղըսում, բանավոր քննություններ կա-  
տարելիս կարելի յեղաբանը բաժանել յերկու մասի  
(որինակ՝ դասարանի մի մասը քննվում է առավոտ-  
յան ժամը 9-ից, իսկ մյուսը՝ յերեկվա ժամը 2-ից)։

ե) Դասամիջոցները պարտագիր են յուրաքանչյուր  
ակտեմբիական ժամից հետո միայն բանավոր քննու-  
թյունների ժամանակ։

14. Քննություններն անցկացնելիս պետք է ապա-  
հագի աշակերտների գիտելիքների առուղումն ըստ  
ծրագրի առարելը բաժինների։

15. Քննությունները կատարվում են սովորական  
դասարաննական պայմաններում՝ քննության յենթարկ-  
ված աշակերտները կարող են դուրս գալ դասարանից։

16. Քննությունները բոլոր դասարաններում կա-  
տարում են տիյալ առարկայի դասառուն, նույն դպրո-  
ցի, միևնույն կամ հարակայի մի ուրիշ։

գասատվի մասնակցությամբ։ Այդպիսիների բացակայության դեպքում քննություններին մասնակցում և անպայման դպրոցի դիրեկտորը (վարիչը)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆ. — Աշակերտին հարցաքննում և միայն քննող դասառուն։ Քննություններին մասնակցող ընթերակալ ուսուցչիչը նույնպես նշանակում է իր գնահատականը։

17. Վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների ավարտական դասարանների (7 և 10-րդ դասարաններ) քննություններին անդամանուրեն պետք է ներկա լինեն՝ ժողկըթ։ բաժնի ներկայացուցիչը և դպրոցի դիրեկտորը կամ ուսումնական մասի վարիչը։

18. Աշակերտների գիտելիքների վերջնական գնահատականը դպրոցի մանկավարժական խորհրդին ներկայացնելու համար՝ վորոշվում և ավյալ դասարանի ուժյալ առարկայի քննությունից անմիջապես հետո՝ զիրեկտորի, քննող ուսուցչի և քննություններին մասնակցող ընթերակալ ուսուցչի կողմից, ըստ վորում վճռական դեր ե կատարում առարկայի դասաստվի գնահատականը։

### ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՑԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

19. Աշակերտները փոխադրվում են հաջորդ դասարան կամ դպրոցն ավարտում են այն ժամանակ, երբ ուսումնական դասընթացի բոլոր առարկաներից «միջակ»-ից ցածր գնահատական չունեն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆ. — Նկարչությունից, գծադրությունից, յերգեցողությունից և ֆիզկուլտուրայից միջակից ցածր գնահատական ունենալը, չպետք է խանդարի աշակերտին հաջորդ դասարան փոխադրելուն։

20. Բնուածնուր տարեկան գնահատականն աշակերտին տրվում է, տարվա ընթացքում, բոլոր քառորդ-

ների քննություններին ստացած գնահատականների հիման վրա։

Տարեկան գնահատականների հիման վրա վորոշում և աշակերտի մի դասարանից մյուս դասարան վոխաղպիկելու կամ դպրոցի ավարտման խնդիրը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆ. — Լեզուներից և գրականությունից տարեկան գնահատականներում պետք է նշանակել գրավորից և բանավորից առանձին գնահատականներ։ Մնացած բոլոր առարկաներից դրվում է միայն մի գնահատական։

21. Ուսումնական առարին ավարտելուց հետո աշակերտին արվում է՝

ա) Առեսառատ՝ (լուսժողկոմատի ստհմանած ձեւով) միջնակարգ դպրոցներ ավարտողներին։


բ) Վկայական՝ տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտողներին։

գ) Փոխադրման վկայականներ՝ գիտելիքների և վարքի գնահատականների մատնանշումով — դասարանից դասարան վոխաղպուղ բոլոր աշակերտներին։

22. Աշնանային քննությունները կատարվում են ուսումնությունից 20-ից 27-ը։

23. Տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների այն աշակերտներին, վորոնք աշնանային քննություններ ունեն, և այս կամ այն պատճառով այլ դպրոց են տեղափոխվելու, տրվում են անձրաժեշտ տեղեկանքներ։

Աշնան քննություններն աշակերտները տալիս են այն դպրոցում ուր տեղափոխվում են։



ՀՀ Ազգային գրադարան



NL0228868

211

50-545

20h